# Աուդիտորական եզրակացություն

«Շեն Տանիք» ՍՊԸ-ի մասնակցին

Մենք իրականացրել ենք «Շեն Տանիք» ՍՊԸ-ի (այսուհետ «Ընկերություն»)՝ կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է սույն հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար: Այդ պատասխանատվությունը ներառում է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական

խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար : Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Շեն Տանիք» ՍՊ ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Նաիրի Սարգսյան
*Տնօրեն*
*Աուդիտոր*

Անդրանիկ Ասլանյան
*Աուդիտի Ղեկավար*
*Աուդիտոր*

«ԳԱՐԱՆՏ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
ք. Երևան, Գ. Նժդեհի 48/2

20 մայիսի 2014թ

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| | Ծանոթագրություններ | 2012<br>֏ 000 | 2013<br>֏ 000 |
|---|---|---|---|
| **Սովորական գործունեություն** | | | |
| Ապրանքների և արտադրանքի վաճառք | | 652 657 | 683 264 |
| Ծառայությունների մատուցում | | 12 963 | - |
| **Հասույթ** | | **665 620** | **683 264** |
| Վաճառքի ինքնարժեք | | (600 153) | (605 740) |
| **Համախառն շահույթ (վնաս)** | | **65 467** | **77 524** |
| Այլ եկամուտներ | | 345 | 209 |
| Բաշխման ծախսեր | | (9 214) | (9 661) |
| Վարչական ծախսեր | | (31 035) | (31 980) |
| Այլ ծախսեր | | (4 766) | (3 580) |
| **Գործառնական շահույթ (վնաս)** | | **20 797** | **32 512** |
| Ֆինանսական ծախսեր | | | |
| Ֆինանսական եկամուտներ | | | |
| Ասոցիացված կազմակերպությունների և համատեղ գործունեության շահույթ (վնաս)՝ հաշվառված բաժնեմասնակցության մեթոդով | | - | - |
| Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս) | | (59 961) | (9 680) |
| **Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) մինչև հարկումը** | | **(39 164)** | **22 832** |
| Շահութահարկի գծով ծախս | | (6 691) | (7 327) |
| **Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)** | | **(45 855)** | **15 505** |
| **Ընդհատվող գործունեություն** | | | |
| Ընդհատվող գործունեությունից շահույթ (վնաս) հարկերը հանելուց հետո | | - | - |
| **Շահույթ (վնաս)** | | **(45 855)** | **15 505** |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ** | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում | | - | - |
| Շահութահարկ | | - | - |
| Այլ համապարփակ ֆինանսական եկամուտ | | - | - |
| **Համապարփակ ֆինանսական արդյունք** | | **(45 855)** | **15 505** |

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| | Ծնթգր. | 2013<br>Դ 000 | 2012<br>Դ 000 |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | | 52 868 | 62 924 |
| Ներդրումային գույք | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | | 74 | |
| Ներդրումներ՝ հաշվ. բաժնեմաս. մեթոդով | | | |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | | | |
| Հետաձգված հարկային ակտիվներ | | 103 | |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| | | 53 045 | 62 924 |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | | 680 963 | 970 483 |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | | 59 585 | 23 957 |
| Տրված կանխավճարներ | | 220 881 | 354 451 |
| Ընթացիկ հարկերի գծով գերավճարներ | | 36 945 | 29 083 |
| Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ | | | |
| Դրամական միջոցներ և համարժեքներ | | 5 910 | 10 989 |
| Ընթացիկ ակտիվներ հետաձգված հարկերի գծով | | 3 547 | 3 231 |
| | | 1 007 831 | 1 392 194 |
| Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ | | - | - |
| | | 1 007 831 | 1 392 194 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **1 060 876** | **1 455 118** |
| **ՊԱՍԻՎՆԵՐ** | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Համալրված կապիտալ | | 17 | 17 |
| Էմիսիոն եկամուտ | | | |
| Հետգնված կապիտալ | | | |
| Այլ պահուստային կապիտալ | | | |
| Չբաշխված շահույթ | | (322 137) | (70 375) |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | | 6 821 | 6 821 |
| Վաճառքի համար պահվող պարտավորութ. պահուստ | | | |
| | | **(315 299)** | **(63 537)** |
| Չվերահսկվող մասնակցություններ | | - | - |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **(315 299)** | **(63 537)** |
| **Ոչ ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Վարկեր և փոխառություններ | | 628 194 | 572 816 |
| Այլ ոչ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | | - | - |
| Պահուստներ | | - | - |
| Պետական շնորհներ | | - | - |
| Աշխատակիցներին հատուցումներ | | - | - |
| Այլ պարտավորություններ | | - | - |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | | | |
| | | 628 194 | 572 816 |
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | | 714 441 | 861 127 |
| Ստացված կանխավճարներ | | 19 027 | 73 687 |
| Վարկեր և փոխառություններ | | 13 478 | 11 025 |
| Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ | | | |
| Ընթացիկ հարկերի գծով պարտավորություններ | | 520 | |
| Պահուստներ | | 515 | - |
| | | 747 981 | 945 839 |
| Վաճառքի համար պահվող պարտավորություններ | | - | - |
| | | 747 981 | 945 839 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **1 376 175** | **1 518 655** |
| **Ընդամենը պասիվներ** | | **1 060 876** | **1 455 118** |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության տնօրինության կողմից 2013թ. փետրվարի 2-ին

Մնացական Սարգսյան
Տնօրեն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: